

Բացատրություն Աբ. Պատարագի

Հին Կտակարանը հիմք՝ Նոր Ուխտի

Մաս Բ.

Քրիստոս երեք տարի Իր առաքելությունն հետ շրջեցաւ Իսրայէլի և Յուդայի քաղաքներուն ու գիւղերուն մէջ և շատ անգամներ ճաշի նստեցաւ Իր հետևորդներուն և մեղաւորներուն տուններուն մէջ ու հաց կիսեց անոնց հետ (*Մատթ. 9:9-11, Ղուկ. 14:1*): Յիսուս Իր երկրային առաքելութիւնը շարունակեց մինչև այն օրը, երբ Պատեքի սեղանին նստեցաւ ու Իր հօր կամքին համաձայն Նոր Ուխտը հաստատեց:

Ս. Պատարագի խորհուրդը հաստատուեցաւ Յիսուս Քրիստոսի կողմէ, երբ վերնատունին մէջ, Վերջին Ընթրիքի ժամանակ Տէրը հացը առաւ, օրհնեց, կարեց ու իր աշակերտներուն տալով ըսաւ, "Առէք, այս է իմ մարմինը" և բաժակը վերցնելով գոհացաւ ու տուաւ Իր աշակերտներուն, որպէսզի բո-լորը խմեն ու ըսաւ, "Այս է նոր ուխտի իմ արիւնը, որ պիտի թափուի շատերուն համար" (*Մարկ. 16:22-24*): Քրիստոս նաև պատուիրեց առաքելներուն ըսելով, "Կատարեցէք այս իմ յիշատակին համար" (*Ղուկ. 22:19, Ա Կորնթ. 11:24, :*)

Քրիստոս հանապազօրեայ հացի և գինիի միջոցով նոր խորհուրդ մը սահմանեց, որուն գործադրութեամբ առաքելները վատ պիտի պահէին իրենց Տիրոջ յիշատակը: Բայց դեռ աւելին, Յիսուսի հաստատած ուխտը պարզապէս յիշատակի հաստատութիւն մը չէր, այլ Աստուծոյ հետ հաղորդակցուելու, Տիրոջը հաւատքով ճանչնալու և հոգևոր փրկութեան առաջնորդուելու ճշմարիտ ճանապարհի մը, ինչպէս Տէրն Ինքն ըսաւ, "Ես եմ ճանապարհը և ճշմարտութիւնը և կեանքը" (*Յով. 14:6*):

Աստուածաշունչ մատենան մէջ առաջին ուխտը Աստուած հաստատեց Նոյի, անոր որդիներուն ու անոնց սերունդներուն հետ ըսելով, "Ահաւասիկ ես ուխտ կը հաստատեմ ձեզի հետ, ձեզմէ յետոյ եկող ձեր սերունդներուն հետ, ձեզի հետ եղող բոլոր կենդանի էակներուն հետ... Թող իմ ծիածանը ըլլայ ամպերուն մէջ, որպէսզի ես տեսնեմ այն ու յիշեմ իմ ու երկրի վրայ գտնուող բոլոր շնչաւոր էակներուն միջև իմ հաստատած յաւիտենական ուխտը" (*Մննորոց 9:8, 9, 16*):

Հին Ուխտը Աստուած կնքած էր Նոյի, Աբրահամի ու անոնց սերունդներուն հետ (*Մննորոց 17:1-27*) և իբրև ուխտի նշան Տէրը հրամայած էր Աբրահամին թլփատել իր ցեղի բոլոր արու գաւակներուն և նոյնիսկ ստորուկներուն: Հին Կտակարանի Ուխտը նաև Աստուծոյ խոստումն էր արուած Իսրայէլին՝ Յակոբին ու անոր սերունդներուն: Տէրը երևցաւ Յակոբին ու անոր օրհնելով ըսաւ, "Քու անունդ Յակոբ է, բայց այլևս Յակոբ պիտի չկոչուիս, այլ Իսրայէլ պիտի ըլլայ անունդ: Աճիր և բազմացիր: Տեղեր ու ցեղախումբեր պիտի ծնուին քեզմէ ու թագաւորներ պիտի ելլեն քու կողէդ" (*Մննորոց 35:9-12*): Այս խօսքերով Տէրը Իր կտակը յայտնեց Յակոբին ու տեղեկացուց գալիքի ու պատահելիքի մասին:

Հին Կտակարանին մէջ առաջին հինգ գիրքերը, որոնք կը կոչուին Հնգամատենան, մեզի կը հաղորդեն այն բոլոր օրէնքներուն մասին, որոնց գործադրութեամբ ու բացարձակ հնազանդութեամբ, իսրայէլացիք պէտք է պաշտամունք մատուցէին Աստուծոյ և ողջակէզներով մեղաւորները իրենց մեղքերը քաւէին (*Ղևւ. 16:1-34*): Հին Ուխտին մէջ կը տեսնենք, թէ ինչպէս Աստուած Իր կոչած առաջնորդներուն ու ընտրած մարգարէներուն միջոցով Աբրահամի սերունդին Յակոբի գլխաւորութեամբ Եգիպտոս առաջնորդեց և 430 տարիներ յետոյ, Մովսէսի ու Ահարոնի գլխաւորութեամբ Եգիպտոսէն դուրս հանեց զանոնք ու Սինայի անապատով առաջնորդեց խոստացուած երկիրը (*Ելից 12:40-42*):

Նոր Ուխտը տրուեցաւ Վերջին Ընթրիքին, երբ Քրիստոս Իր խոստումով մէկ անգամ ընդմիջտ հաստատեց Հին Կտակարանի մարգարէներուն գուշակութիւնները (*Եսայի 7:14, 52:13-14, 53:3-5, Միքիա 5:2-5, Չաքարիա 9:9-10*): Վերջին Ընթրիքի հացի ու գինիի ճաշակումը համեստ խնձոյք մը հանդիսացաւ "Արդար, փրկագործ ու խոնարհ թագաւորի" (*Չաք. 9:9*) և Իր հաւատաւոր աշակերտներուն համար, նախքան գերագոյն Չոհի պատարագուիլն ու Անոր արեան հեղումը, որ պիտի թափուէր մարդկութեան մեղքերու քաւութեան համար:

Գինիի ու հացի մատուցման սովորութեանը Աստուածաշունչին մէջ առաջին անգամ կը հանդիպինք Մննորոց գիրքին մէջ, երբ Աբրամ պատերազմէն վերադարձին հիւրասիրուեցաւ Սաղէմի արքայ Մելքիսեղեկի կողմէ. "Մելքիսեղեկը հաց ու գինի հիւրասիրեց անոր, որովհետև

ինքը բարձրեալ Աստուծոյ քահանան էր” (Ծննդոց 14:18):

Նացը սուրբ գրական ժամանակներուն կեանք կը խորհրդանշէր և Նրեայ ժողովուրդին համար՝ Տիրոջ ներկայութիւնը տաճարին ոսկէգօծ սեղանին վրայ (Ելից 25:30): Գինին արատութիւն և խաղաղութիւն կը խորհրդանշէր և ուրախութիւն կը պարզէր խաղաղութեան մէջ գտնուող ժողովուրդին, իսկ որթատունկի փճացումն ու այգեկութի վերացումը տխրութիւն ու սուգ կը բերէր Իսրայէլի ցեղերուն (Գ. Թագ. 4:24-25, Միքիա 4:3-4, Չաք. 3:10, Եսայի 16:8-10):

Տ. Վարդան Զինյ. Ջուլֆայեան